Ամսոյս 14-ին առաւօտեան ժամը 7-ին կնքեց իւր մահկանացուն պրոկուրոր Սինոդի Ս. Էջմիածնի Ստաւոսկի Սովէտնիկ ՆԻԿՈՂԱՅՈՍ ՍՏԵՓԱՆՆՈՍԵԱՆ Տ. ՅՈՎՍԷՓԵԱՆՑ 50 տարեկան հասակում, և թաղուեց Աշտարակ գիւղի իւր հայրենի գերեզմանոցում պատշաճաւոր յուղարկաւորութեամբ։

Հանգուցեալն իւր ուսումն աւարտել է Լազարեան ճեմարանում 1857 թ. վարել է ուսուցչութեան պաշտօն Տփխիսոյ Ներսէսեան ուսումնարանում և Ս. Էջմիածնի ժառանգաւորաց դպրանոցում. նաև Ս. Սինոդի թարգմանի պաշտօնն, որի համար ի նշան ջերմեռանդ ծառայութեան ըստ առաջարկութեան Սինոդի ստացել է Ս. Ստանիսլաւի 3-որդ շքանշան։ 1867 թուին գնալով հրաւիրակ հանգուցեալ Գէորգ Դ. Կաթուղիկոսին ի Կ. Պոլիս, ստացել է Օսմանեան Վեհ. Սուլթանից Մէճիտիէ Դ. շքանշան։ Եւ ի նշան առանձին բարեհաճութեան Մեծ իշխան փոխարքայն Կովկասու պարգեւել է հանգուցեալոյն բրիլեանդէ մատանի, և մի բրիլեանդէ մատանի Նորին կայսերական Մեծութիւն Աղէքսանդր Բ. Կայսրն՝ շնորհել է հանգուցեալ Գէորգ Դ. կաթուղիկոսի ներկայանալու միջոց թարգմանի պաշտօն վարելուն համար։ 1868 թ. ստացել է Ս. Աննայի Գ. շքանշան. 1873-ին Ս. Ստանիսլաւի Բ. շքանշան։ 1878-ին նշանակուել է Պրոկուրոր Սինոդի Ս. Էջմիածնի զոր հաւատարմութեամբ և ջերմեռանդութեամբ վարեց ցմահ իւր. սոյն պաշտօնավարութեան միջոցին 1882-ին Ս. Աննայի Բ. և 1887-ին Վլադիմիրի 4 շքանշաններն ստացել է։ Տէր լուսաւորեսցէ զհոգի հանգուցելոյն, ամէն։